600.0084.22.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2017 թվականի №84Ա
քաղ. Երևան

«ԱՅՔԱՆ ՔՈՄՈՒՆԻՔԵՅՇՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N115Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1ին կետի «ա» ենթակետը և հաշվի առնելով «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մարտի 15-ի №1402 և №1403 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. 2017 թվականի փետրվարի 28-ից «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2008 թվականի դեկտեմբերի 3-ի №664Ա, 2009 թվականի օգոստոսի 26-ի №530Ա և 2009 թվականի հոկտեմբերի 21-ի №659Ա որոշումներով «ԱՅՔԱՆ ՔՈՄՈՒՆԻՔԵՅՇՆՍ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման համապատասխանաբար՝ №0488, №0629 և №0665 թույլտվությունները,
   2) 2007 թվականի նոյեմբերի 23-ի №591Ա, 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №687Ա և 2008 թվականի հունիսի 25-ի №328Ա որոշումներով տրամադրված և 2008

թվականի հուլիսի 9-ի N357Ա որոշմամբ «ԱՅՔԱՆ ՔՈՄՈՒՆԻՔԵՅՇՆՍ» փակ բաժնետիրական ընկերության անվամբ վերաձևակերպված ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման համապատասխանաբար՝ №0275, №0296 և №0390 թույլտվությունները,

3) 2009 թվականի փետրվարի 25-ի №46Ա որոշմամբ «ԱՅՔԱՆ ՔՈՄՈՒՆԻՔԵՅՇՆՍ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված հանրային ամրակցված հեռախոսային ցանցի միջազգային ազդակների հանգույցի կոդի, ոչ աշխարհագրական կոդի և համարների զբաղեցման թույլտվությունը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված ռադիոհաճախականությունների օգտագործման №0488, №0629 և №0665 և ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման №0275, №0296 և №0390 թույլտվությունների գործողության ժամկետները երկարաձգել մինչև 2023 թվականի նոյեմբերի 19-ը՝ թույլտվությունների պայմանները շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար N1-N6 հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 23-ի «ԳՈԼԴ ՌԵՄՕՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» N115Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 մարտի 2017թ.
ժամը 16⁰⁰